# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
# ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N *32* *16 սեպտեմբերի 2011թ.*

## ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի ու <<ՀՀ բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ընդունել Արարատի քաղաքային համայնքի ավագանու նիստում համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության քննարկման կարգը /հավելված 1/ և այն ներառել համայնքի ավագանու կանոնակարգում, որպես առանձին՝ 29-րդ կետ:
/ Հավելված 1: Կցվում է/:

Կողմ՝ 11

***Ավագանու անդամներ՝***

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Արթուր | Ալեքսանյան | | կողմ |
| 2. | Արազի | Գևորգյան | | կողմ |
| 3. | Հենրիկ | Գևորգյան | | կողմ |
| 4. | Յուրիկ | Գևորգյան | | կողմ |
| 5. | Կարեն | Իսկանդարյան | | կողմ |
| 6. | Վարդան | Կարապետյան | | կողմ |
| 7. | Մուշեղ | Հակոբյան | | կողմ |

8. Տիգրան Հարությունյան _____ _____

9. Խաչիկ Մնացականյան _____ _____

10. Ռոբերտ Նավասարդյան _____ _____

11. Իլյիչ Շաղյան _____ _____

Կ/Տ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱԲԱՅԱՆ

Հավելված1
Ընդունված է
Արարատի[illegible] համայնքի
ավագանու 20[illegible] [illegible]բերի 16-ի
[illegible]8 նիստում

# ԿԱՐԳ

## Համայնքի ավագանու նիստում համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության քննարկման

1. Համայնքի ղեկավարը եռամսյակը մեկ անգամ, մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումներ է ներկայացնում համայնքի ավագանուն:
2. Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանուն ներկայացնում է մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը:
3. Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը ավագանու նիստում քննարկվում և հաստատվում է, աուդիտորական մասնագիտացված կազմակերպության եզրակացության առկայությամբ, մինչև ընթացիկ տարվա մարտի 20-ը:
4. Համայնքի ավագանին բյուջեի կատարման վերաբերյալ կարող է անցկացնել նաև անկախ աուդիտ, իսկ իրավախախտումներ հայտնաբերելու դեպքում դիմել համապատասխան իրավասու մարմիններ:
5. Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը ներառում է.
   ա/ տեղեկություններ հաշվետու տարում համայքնի բյուջեի եկամուտների և ծախսերի հիմնավորվածության վերաբերյալ, դրանց համապատասխան վերլուծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա փաստացի և հաշվետու տարվա համար հաստատված և փաստացի կատարված համապատասխան ցուցանիշների միջև
   բ/ տեղեկություններ հաշվետու տարում համայնքային բյուջեի պահուստային ֆոնդից կատարված ծախսերի ուղղությունների և չափերի մասին՝ համապատասխան հիմնավորումներով.
   գ/ տեղեկություններ հաշվետու տարում բյուջեի պարտքերի և դրանց սպասարկման վերաբերյալ
   դ/ այլ տեղեկություններ, որոնք համայնքի ղեկավարը անհրաժեշտ է համարում համայնքի բյուջեի կատարման արդյունքները ներկայացնելու և հիմնավորելու համար:
6. Համայնքի ավագանու նիստում բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը ներկայացնում է համայնքի ղեկավարը:
   Զեկուցումներով կարող են հանդես գալ.
   ա/ համապատասխան մշտական հանձնաժողովի ներկայացուցիչը՝ ներկայացնելով բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ հանձնաժողով եզրակացությունը,
   բ/ ըստ ցանկության մյուս հանձնաժողովների մեկական ներկայացուցիչներ՝ ներկայացնելով բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ իրենց հանձնաժողովի եզրակացությունը:
7. Համայնքի ավագանու անդամները համայնքի ղեկավարին և մյուս զեկուցողներին հարցեր են տալիս սահմանված կարգով, որից հետո տեղի է ունենում մտքերի փոխանակություն՝ սահմանված կարգով:

8. Մտքերի փոխանակության ավարտից հետո քվեարկության է դրվում բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին ավագանու որոշման նախագիծը:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
# ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**N** ***33*** ***16 սեպտեմբերի 2011թ.***

**ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2011-2015Թ.Թ. ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի ու <<ՀՀ բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջներով.

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հաստատել Արարատի քաղաքային համայնքի զարգացման 2011-2015թ.թ. քառամյա ծրագիրը:
/ Հավելված 2: Կցվում է/:

Կողմ՝ 11

***Ավագանու անդամներ՝***

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Արթուր | Ալեքսանյան | | կողմ |
| 2. | Արազի | Գևորգյան | | կողմ |
| 3. | Հենրիկ | Գևորգյան | | կողմ |
| 4. | Յուրիկ | Գևորգյան | | կողմ |
| 5. | Կարեն | Իսկանդարյան | | կողմ |
| 6. | Վարդան | Կարապետյան | | կողմ |
| 7. | Մուշեղ | Հակոբյան | | կողմ |

8. Տիգրան Հարությունյան _____ _____

9. Խաչիկ Մնացականյան _____ _____

10. Ռոբերտ Նավասարդյան _____ _____

11. Իլիչ Շաղյան _____ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱԲԱՅԱՆ

Հավելված 2
Հաստատված է
Արարատի քաղաքային համայնքի
ավագանու 2011 ... 16-ի
... որոշմամբ

*Արարատի քաղաքային համայնքի*
*սոցիալ – տնտեսական զարգացման*
*2011-2015թթ. քառամյա ծրագիրը*

*2011թ. հուլիսի 3-ին կայացավ Արարատի քաղաքապետի հերթական ընտրությունը: Ընտրության արդյունքներով գործող քաղաքապետ Աբրահամ Բաբայանը կրկին վերընտրվեց:*

*Առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի և 32-րդ, 53- րդ հոդվածների պահանջներով մշակվել և հաստատման է ներկայացվում Արարատի քաղաքային համայնքի քառամյա /2011-2015թթ./ զարգացման սույն ծրագիրը:*

*Քառամյա ծրագրի մշակման ընթացքում հաշվի են առնվել քաղաքապետի նախընտրական հանդիպումների ժամանակ քաղաքային կյանքին առնչվող ընտրողների կողմից բարձրացված հարցերն ու արված առաջարկությունները, քաղաքապետարանի համապատասխան բաժինների կողմից իրենց սպասարկող բնագավառների ուսումնասիրության արդյունքներով հրատապ ճանաչված հարցերը, համայնքային ենթակայության կազմակերպություններից և մյուս կոլեկտիվներից ստացված ինչպես նաև, համայնքի ավագանու անդամների առաջարկությունները:*

*Քաղաքային համայնքի սոցիալ – տնտեսական զարգացման 2007 – 2011թթ. քառամյա ծրագրի արդյունքների ամփոփումը ցույց տվեց, որ նրանում նախատեսված հիմնական խնդիրները հաջողությամբ լուծվել են իսկ չլուծված հարցերը ներառվել են սույն ծրագրում:*

*Համայնքի սոցիալ – տնտեսական զարգացման սույն ծրագրով նախատեսվում են լուծել հետևյալ խնդիրները:*

## *1. Համայնքի ֆինանսական վիճակի հետագա բարելավման, կայուն համակարգ ստեղծելու նպատակով*

| | | |
|---|---|---|
| *1.1. Հաշվի առնելով առկա հնարավորություններն ու լրացուցիչ աղբյուրները համայնքի ամենամյա բյուջեն կազմել իրատեսական: Այն քննարկել և ընդունել բնակչության լայն մասնակցության ապահովումով և առաջարկությունները հաշվի առնելով: Եկամտային և ծախսային մասերը կազմել հաշվեկշռված:* | *Քաղաքապետի աշխատակազմ Համայնքի ավագանի* | *2011-2015թթ.* |

| | | |
|---|---|---|
| 2.5. Բնակչության հանգստի անկյուներ ստեղծելու նպատակով յուրաքանչյուր տարի բարեկարգման աշխատանքներ կատարել Արարատ քաղաքի և ՈԿՖ բանավանի բազմաբնակարան բնակելի շենքերի մեկական բակերում, դրանք ապահովել հանգստի անհրաժեշտ պարագաներով: | Համայնքային բյուջեի միջոցներով<br>Առանձին ծրագրով | 2012-2015թթ. |
| 2.6. Շարունակական դարձնել քաղաքի և ՈԿՖ բանավանի դեռևս չասֆալտապատված կամ վերանորոգման կարիք զգացող փողոցների բարեկարգման աշխատանքները: | Համայնքի միջոցներով | 2011-2015թթ. |
| 2.7. Ավարտին հասցնել Աբովյան, Շահումյան, Խանջյան փողոցների մայթերի սալիկապատումը,շարունակել բարեկարգել և ասֆալտապատել մյուս մայթերը: Շարունակել Արարատ քաղաքի և ՈԿՖ բանավանի մնացած փողոցների լուսավորության անցկացումը | Համայնքի միջոցներով | 2011-2013թ.թ. |
| 2.8.. Հետևողական աշխատանք տանել ի վերջո լուծելու Շահումյան փ. 20 շենքի կառուցման հարցը | << Կառավարություն<br><< Արարատի մարզպետարան, քաղաքապետարան | 2012-2015թթ. |
| 2.9. Ավարտին հասցնել քաղաքում կառուցվող «Ամենափրկիչ» եկեղեցու նախագծա - նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները: Բացել եկեղեցու կառուցման համար հավաքագրվող գումարների հաշվարկային հաշիվ, պատրաստ լինել եկեղեցու կառուցման աշխատանքների սկսելուն: | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, քաղաքապետարան | 2011-2012թթ. |
| 2.10. Համայնքային բյուջեի միջոցներից ամենամյա ներդրումներ կատարել «Ամենափրկիչ» եկեղեցու կառուցման համար: Աշխատանք տանել բնակչության և քաղաքից դուրս ապրող նախկին արարատցիների շրջանում հնարավորինս մասնակցելու եկեղեցու կառուցմանը:<br>Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի աջակցությամբ այդ նպատակի համար դիմել նաև բարերարների օգնությանը հասնել նրան, որ ընդունված ավանդույթի համաձայն 7-8 տարում ավարտվի եկեղեցու կառուցումը: | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, քաղաքապետ, շահագրգիռ անձինք | 2011թ. |
| 2.11. Համայնքային բյուջեի միջոցներով և ծրագրով հատկացված միջոցներով վերանորոգել մշակույթի տան ճեմասրահը, տեղադրել նոր պատուհաններ, մեծ դահլիճում լուծել լուսավորության և կոմֆորտիկ վերանորոգման հարցերը, ստեղծել նորմալ պայմաններ բնակչության սպասարկման համար: | << Արարատի մարզպետարան, քաղաքապետարան | 2011-2012թ.թ. |
| 2.12. Վերակառուցել և վերանորոգել մշակույթի տան երկրորդ հարկի երկու սենյակները և այն դարձնել քաղաքի պատմության թանգարան: | Համայնքային բյուջե | 2011-2012թ.թ. |
| 2.13. Յուրաքանչյուր տարի վերանորոգել բազմաբնակարան բնակելի 10-12 շենքերի վթարված տանիքները, այն հաշվարկով, որ 2015թ. վերջին հիմնականում ավարտին հասցնել այդ աշխատանքները: | Առանձին ծրագրով | 2011-2015թ.թ. |
| | | 2011թ. |

| | | |
|---|---|---|
| 2.14. Մասնակի նորոգման աշխատանքներ կատարել թիվ 2 թիվ 3 մանկապարտեզներում: Տեղադրել մետաղապլաստե դռներ և պատուհաններ, անցկացնել լոկալ ջեռուցում: | Առանձին ծրագրով | |

## 3. Կոմունալ սպասարկման և բնապահպանական աշխատանքների կազմակերպում.

| | | |
|---|---|---|
| 3.1. Հաշվի առնելով, որ քաղաքային կոմունալ ծառայության բնականոն աշխատանքների կազմակերպման համար ստեղծված են բոլոր պայմանները, բարձր մակարդակով կազմակերպել սանմաքրման և աղբահանության ամենօրյա աշխատանքները; Հնարավորինս ախտահանել աղբատար մեքենաները, աղբարկղերը և նրանց շրջակա տարածքները: | Քաղաքապետարան կոմունալ ձեռնարկություն | մշտապես |
| 3.2. Կատարել քաղաքի գլխավոր փողոցների ամենօրյա ջրանցում, ծմռանը փողոցների ձյան մաքրում, սառցակալած տարածքները աղի և ավազի մեքենայական շաղ տալը: | Կոմունալ ձեռնարկություն | Ըստ անհրաժեշ-տության |
| 3.3. Յուրաքանչյուր տարի քաղաքում և ՈԿՖ-ի բանավանում 70-100 քմ-ով ավելացնել կանաչ տարածքներ: | քաղաքապետարան կոմունալ ձեռնարկություն | - |
| 3.4. Ի կատարումն 2011թ. հունիսի 23-ին ընդունված «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջի, համայնքի ավագանու նիստում անդրադառնալ քաղաքում աղբահանության դրույքաչափերին և մշակել օրենքի պահանջներից բխող քաղաքում իրականացվելիք միջոցառումների ծրագիր: | համայնքի ավագանի, աշխատակազմ, կոմունալ ձեռնարկություն | 2011թ. մինչև նոյեմ-բեր |
| 3.5. Հետևել սովորող երիտասարդության էկոլոգիական կրթության աշխատանքների կազմակերպմանը: | քաղաքապետարան, հանրակրթական դպրոցներ | 2012-2015թ. |
| 3.6. Ամեն տարվա օգոստոս ամսին մշակել և ՀՀ բնապահպանության նախարարությունն ու ՀՀ Արարատի Մարզպետարան ներկայացնել հերթական տարվա բնապահպանական ծրագիր: Այդ ծրագրերի շնորհիվ ապահովել տեղական բյուջի 13-18մլն. դրամ ամենամյա սուբվենցիայի մուտք: | Քաղաքապետարան ըստ ծրագրերի | 2012-2015թ. |
| 3.7. Բնապահպանական նպատակով համայնքին հատկացված գումարների հաշվին ընդլայնել կանաչ տարածքները, շարունակել ծառատնկումը, կազմակերպել բնակչության առողջությանը նպատակամղված միջոցառումներ, ձեռք բերել անհրաժեշտ բժշկական և սան մաքրման սարքավորումներ: Մասնավորապես ձեռք բերել երկու հատ փոշեհավաք մեքենա: | Քաղաքապետարան Արարատի Առողջապահական կենտրոն Կոմունալ ձեռնարկություն | Ըստ հատկացվա միջոցների |
| 3.8. Գործուն մասնակցություն ցուցաբերել Արարատի ցեմենտի գործարանի և Ոսկու ֆաբրիկայի հարակից տարածքի անտառի հիմնման մարզային ծրագրին, որն էական նշանակություն կունենա քաղաքի և ՈԿՖ-ի բանավանի էկոլոգիական խնդիրների լուծման գործում: | Քաղաքապետարան քաղաքի և ՈԿՖ բանավանի բնակչություն | Համաձայն ծրագրի ժամկետի |

## 4. Հոգևոր – մշակութային և սպորտային աշխատանքների կազմակերպումը

| | | |
|---|---|---|
| 4.1. Առավել արդյունավետ դարձնել բնակչության հոգևոր-մշակութային պահանջների բավարարմանը նպատակամշակված աշխատանքներն ու կազմակերպվող միջոցառումները:<br>Շարունակել բնակչության կողմից մշտապես ջերմ ընդունվող ամենամյա անվանակոչությունների, հուշամրցաշարերի, սպարտակիադաների և համաքաղաքային բազմաբնույթ այլ միջոցառումների կազմակերպումը, «Արարատի պատվավոր քաղաքացի» կոչման շնորհումը: | Քաղաքապետարան Համայնքի ավագանի, մշակույթի կենտրոն | Մշտապես |
| 4.2. Մեծ շուքով նշել անկախության 20-ամյակը: Կազմակերպված անցկացնել 2012թ. Ազգային ժողովի և ավագանիների հերթական ընտրությունները, 2013թ. ՀՀ նախագահի ընտրությունները: | Քաղաքապետարան կոլեկտիվներ | Ըստ ժամկետների |
| 4.3. Համապատասխան աշխատանքներ տանել քաղաքացիական հասարակության ձևավորման ուղղությամբ: Ապահովել և ակտիվացնել բնակչության և հատկապես երիտասարդության մասնակցությունը համայնքի առջև ծառացած խնդիրների լուծմանը : Ստեղծել «Երիտասարդական ակումբ» ՀԿ: | Քաղաքապետարան, Մշակութային կենտրոն | - |
| 4.4. Կազմակերպել բնակչությանը և հատկապես երիտասարդությանը զանազան աղանդներից զերծ պահելու միջոցառումներ: Կանխել նոր աղանդների ներթափանցումը քաղաք; Այդ նպատակին ծառայեցնել նաև Հայ առաքելական եկեղեցու պատմության դասավանդումը դպրոցներում: | Քաղաքապետարան, հանրակրթական դպրոցներ, Մշակույթի կենտրոն | Մշտապես |
| 4.5. Առավել ակտիվացնել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հետագա զարգացման ուղղությամբ քաղաքում տարվող աշխատանքները, ապահովել կարգային սպորտսմենների պատրաստումը և նրանց մասնակցությունը հանրապետական և միջազգային մրցաշարերին: | Քաղաքապետարան, Սպորտ դպրոց | Մշտապես |
| 4.6. Մեծ եղեռնի 100-ամյակը պատշաճին նշելու նպատակով ստեղծել աշխատանքնային խումբը: Համաժողովրդական քննարկման միջոցով ընտրել եղեռնի 100-ամյակին նվիրված քաղաքում որևէ հուշակոթողի կառուցման հարցը: | Քաղաքապետարան համայնքի ավագանի, կոլեկտիվներ, | 2013-2014թ. |

## 5. Կազմակերպական և ներհամայնքային աշխատանքները

| | | |
|---|---|---|
| 5.1. Առավել արդյունավետ կազմակերպել քաղաքապետարանի և համայնքի ավագանու աշխատանքները: Ապահովել աշխատանքների հրապարակայնությունը, թափանցիկությունը և մասնակցությունը: Լիարժեք իրականացնել այդ ուղղությամբ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջները:<br>Բարձրացնել աշխատակազմի աշխատողների արհեստավարժությունը և նրանց նկատմամբ իրականացվող պահանջկոտությունը: | Համայնքի ղեկավար, ավագանի | - |
| 5.2. Բարձրացնել պաշտպանության, արտակարգ իրավիճակների և հասարակական կարգի պահպանության բնագավառներում տարվող աշխատանքների մակարդակը:<br>Մշակել աշխատակազմի և կոլեկտիվների կոնկրետ գործունեությունների ծրագիր արտակարգ իրավիճակներում: Ուսումնասիրել և վերահաշվառել ապաստարանների, թաքստոցների վիճակը և տարողությունները: Ժամանակին բնակչությանը իրազեկել արտակարգ իրավիճակներում իրենց անելիքների մասին և նախապես ծանոթացնել թաքստոցներին: | Քաղաքապետարան մշտապես կոլեկտիվներ | |
| 5.3. Կազմակերպել բնակչության իրավական գիտելիքների բարձրացմանը նպատակամղված միջոցառումներ:Մշտական ուշադրության կենտրոնում պահել հասարակական կարգի պահպանության հարցերը: | քաղաքապետարան պատասխանատու կազմակերպություններ | - |
| 5.4. Ամրապնդել կապերը քույր քաղաքների հետ: Կապեր հաստատել նոր քաղաքների և ՀՀ-ում ծրագրեր իրականացնող դոնոր կազմակերպություններ հետ: Համաֆինանսավորումով նրանց հետ իրականացնել առանձին ծրարգրերը: | Համայնքի ղեկավար, աշխատակազմ | - |

* *
*

Քաղաքային իշխանությունը լավ է գիտակցում, որ ինքը հասարակության առջև սոցիալական մեծ պատասխանատվություն է կրում, որ իր խնդիրների լիարժեք լուծումը մեծ չափով կնպաստի համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի հետագա բարելավմանը:

Արարատի քաղաքային համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման սույն ծրագիրը ծանոթության համար ուղարկել կոլեկտիվներին, քննարկել համայնքի ավագանու հանձնաժողովներում, քաղաքապետարանի բաժիններում, ստացվող առաջարկություններով ու դիտողություններով հանդերձ այն լրամշակել և ներկայացնել համայնքի ավագանու առաջիկա նիստի հաստատմանը:

* *
*

Դոնոր կազմակերպությունների միջոցով իրականացվելիք ծրագրերի հավելվածը կցվում է:

# ՀԱՎԵԼՎԱԾ

**Արարատի քաղաքային համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման 2011-2015թ.թ. քառամյա ծրագրի Դոնոր կազմակերպությունների աջակցությամբ և հատկացվելիք դրամաշնորհների /նաև համայնքի համաֆինանսավորումով/ իրականացվելիք**

**ԾՐԱԳՐԵՐԸ**

| | | |
|---|---|---|
| 1. Անօթևան մնացած և Արարատյան Ջանգվածի թիվ 3 հանրակացարանի բնակիչների ապրելու պայմանները որոշակի չափով բարելավելու նպատակով վերականգնել հանրակացարանի Ա մասնաշենքի ծախ հատվածի տանիքը, մասնակի նորոգել աջ հատվածի տանիքը: Նորոգել բնակության համար նորմալ պայմաններից զուրկ հանրակացարանի 3 սենյակները և այն հատկացնել անօթևան մնացած բազմաշունչ ընտանիքներին. | Դոնոր կազմակերպություն, համայնք | 2012-2014թթ. |
| 2. Ոռոգման ինքնահոս ջրից զրկված քաղաքի կանաչ տարածքները պահպանելու, շուրջ 10հա տնամերձ հողատարածքները ոռոգելու, գործող միակ խորքային հորի հետ քաղաքի ոռոգման ջրի մինիմալ պահանջները բավարարելու նպատակով կառուցել քաղաքը Վեդի գետի հետ միացնող 25-30լ/վրկ հոսք ապահովող ոռոգման ջրի կիսախողովակաշար: | Հազարամյակի մարտահրավերներ հիմնադրամ, համայնք | 2012-2013թթ. |
| 3. Լուծել մանկական գրադարանի հիմնանորոգման հարցը:Մանուկների համար սպասարկման բավարար պայմաններ ստեղծելու, շենքի արտաքին տեսքը նորմալ վիճակի բերելու նպատակով շարքից դուրս եկած դռներն ու լուսամուտները փոխարինել մետաղապլաստե դռներով և պատուհաններով: Հնարավորության դեպքում ծեռք բերել որոշ տեխնիկական միջոցներ և գույք: | «Փրկեք երեխաներին», «Վոլդ Վիժն» կազմակերպություններ, համայնք | 2012-2013.թ |
| 4. ՀՀ Պաշտպանության նախարարության թույլտվության դեպքում, հարակից տարածքում գտնվող զորամասի կաթսայատնից ջեռուցման գիծ անցկացնել ՈԿՖ բանավանի թիվ 1 մանկապարտեզի 4-խմբասենյակները ջեռուցելու համար: | ՀՀ ՊՆ Դոնոր կազմակերպություն, «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ Քաղաքապետարան | 2012.թ |
| 5. «Սիվիլիթաս» հիմնադրամի կողմից հատկացված դրամաշնորհով քաղաքային գրադարանում անցկացված լոկալ ջեռուցման և մետաղապլաստե դուռ տեղադրված շենքի պայմանների հետագա բարելավման նպատակով լուծել տարածքի կոսմետիկ նորոգման հարցը: | Սոցիալական պաշտպանության համակարգերի ծրագիր. համայնք | 2013-2014թ.թ |

| | | |
|---|---|---|
| 6. Դոնոր կազմակերպությունների միջոցով ըստ համայնքի ներկայացրած ծրագրի լուծել քաղաքային հիվանդանոցի շտապօգնության շենքի հիմնանորոգման հարցը. | Առաջնային առողջապահության բարելավումների ծրագիր, Արարատի «Առողջապահական կենտրոն», Քաղաքապետարան | 2013-2014թ. |
| 7. Քաղաքապետարանում ներդնել «Մեկ պատուհանից սպասարկում» ծրագիրը: | «GTZ» կազմակերպություն, ՄԱԶԾ, համայնք | 2012-2013թ.թ. |
| 8. Հասարակական կյանքին երիտասարդության ակտիվ մասնակցությունը ապահովելու, համայնքային խնդիրների լուծմանը նրանց հնարավորինս ներգրավելու և քաղաքացիական ակտիվության բարձրացման նպատակով ստեղծել «երիտասարդական ակումբ» հասարակական կազմակերպություն և աշխատանքները կազմակերպել ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ: | ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի «Երիտասարդության և վստահության ստեղծման խթանումը Հայաստանում» ծրագիրը, քաղաքապետարան | 2012թ. |

* *
*

Սույն ծրագրերի մշակման և դոնոր կազմակերպություններին ներկայացնելու գործընթացին մասնակից դարձնել քաղաքապետարանի համապատասխան բաժիններին, մասնագետներին, համապատասխան կազմակերպությունների և կոլեկտիվների ղեկավարներին: